

**«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՍՇՏԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ*

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ն

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու թիվ 1 հիմնական դպրոցի
ուսուցիչ՝ Ֆլորա Սիմոնյան

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	2
Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ն	4
Մեթոդի ընտրությունը դասապրոցեսում	11
ՏՀՏ-ն որպես օտար լեզվի դասավանդման գործիքներ	23
Եզրակացություն	28
Օգտագործված գրականության ցանկ	30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում մանկավարժության սահմանները ընդլայնվել են, փոփոխվել է նաև մանկավարժության ուսումնասիրության առարկան: Մարդը զարգանում և փոփոխվում է ողջ կյանքի ընթացքում, այսինքն նա շարունակական մանկավարժական օգնության կարիք է զգում ողջ կյանքի ընթացքում: Մանկավարժական գիտելիքների նկատմամբ ժամանակակից մոտեցումները պահանջում են որպեսզի այս դասընթացն իր մեջ ներառի և ինտեգրի տեսական և տեխնոլոգիական հատվածներ, այսինքն ուսուցման ժամանակակից մեթոդները անհնար է պատկերացնել առանց SՏՏ գործիքների կիրառման:

Մեր ժամանակներում SՏՏ-ները մուտք են գործում մարդու կենսագործունեության բոլոր, այդ թվում նաև դպրոցական ոլորտ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն օտար լեզուների դասերին նպաստում է ուսուցման արդյունավետությանը, մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունները, ճանաչողությունը, այլընտրանքային և փոխկապակցված մեթոդների կիրառման հնարավորությունները:

Ուսուցման մեթոդը ներառում է ուսուցչի կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Որպեսզի մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ:

Մեթոդների ընտրությունը և կիրառությունը կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Դրանց մի մասը հաջողությամբ կիրառվել են դարեր շարունակ, սակայն հասարակության զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Օտար լեզուների դասավանդման հետ կապված ուսումնադաստիարակչական աշխատանքի կատարելագործման կարևոր նախադրյալ է յուրաքանչյուր ուսուցչի

կողմից ուսուցման նպատակների գիտակցումը, ուսուցման համակարգին նոր մեթոդական համալիրների բովանդակությանը տիրապետելը, արդյունավետ մեթոդական հնարքների իմացությունը, դասի և դասսանյութի բոլոր բաղադրիչների:

ինչպես նաև ուսումնադաստիարակչական և զարգացնող հնարավորությունների նպատակասլաց օգտագործումը:

Այսպիսով մեր հետազոտության նպատակն է՝ բարձրացնել ուսումնառության որակը, համակարգել այն մարտավարությունները, որոնց միջոցով լեզվի գործնական կիրառումը պետք է լինի ուսուցման նպատակ: Այս ամենն իրագործելու համար ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական հետևյալ կարողունակություններին.

իմացական, ճանաչողական, առարկայական, մեթոդական, կազմակերպչական, հաղորդակցական և հոգեբանամանկավարժական:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏՀՏ-Ն

Անգլերենում կան բազմաթիվ մեթոդներ լեզուն ուսումնասիրելու համար:

Շատ կարևոր է ճիշտ մեթոդի ընտրությունը:

Արդյունավետ դասապրոցես կազմակերպելու համար ուսուցչին անհրաժեշտ են բազմազան մեթոդների իմացություն և համապատասխան մեթոդի ընտրություն կատարելու հնարավորություն՝ ելնելով ուսուցման նպատակից, խնդիրներից, ակնկալվող արդյունքներից և այլ կարևոր գործիքներից: Որպեսզի ուսուցման կազմակերպումը արդյաունավետ լինի, ուսուցիչը պետք է տեղյակ լինի ոչ միայն այն մասին, թե ինչպիսի առավելություններ է տալիս դրանց կիրառումը, այլ նաև պետք է կարողանա կարգավորել այն խնդիրները, որոնք կարող են ծագել դասավանդման գործընթացում:

Մեթոդը հունարեն « մեթոդոս » բառն է, որը նշամակում է ուղի, եղանակ: Ուսուցման մեթոդներ ասելով հասկանում ենք ուսուցչի և աշակերտների փոխադարձաբար կապված գործողության եղանակները, որոնք ուղղված են ուսուցման խնդիրների լուծմանը:

Մեթոդը ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակ է: Միաժամանակ սովորողների գիտական աշխարհայացքը ձևավորելու, նրանց ընդունակություններն ու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու եղանակ:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ավանդական են համարվում բացատրական, գննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվություն /գիտելիքի/ պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է ներկայացնել երկու խմբով՝ ավանդական և նոր կամ ժամանակակից:

Մեթոդները կարող են լինել՝

Խոսքային՝ դրանցից են պատմելը, դասախոսությունը, զրույցը, բանավեճը, քննարկումը: Զննական՝ իյուստրացիա, դեմոնստրացիա.

Գործնական՝ վարժությունները, լաբորատոր և գործնական աշխատանքները, խմբային, հետազոտական և այլն.

1. Խոսքային մեթոդներ

«Պատմել» - այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում: Պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում ամփոփումով: Շարադրվում կամ պատմվում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ խստագույնս պահպանելով սխտեմատիկության և հաջորդականության սկզբունքը: Պատմելու ընթացքում վարպետորեն առանձնացվում է նյութի գլխավոր տարրերը: Գիտելիքները հիմնավորվում է օրինակներով, գիտական փաստերով, համապատասխան իյուստրացիաներով և դեմոնստրացիաներով: Այս մեթոդի կիրառման ժամանակ գործադրվում է մի շարք հնարներ, օրինակ՝ «համեմատության», «համադրության», «սովորողների ուշադրության ակտիվացման» և այլն:

«Զրույց» - մեթոդի էությունն այն է, որ սովորողները պատասխանում են նախօրոք կազմված հարցերին: Այս մեթոդը կիրառվում է նոր նյութի հաղորդման, ամրապնդման, ստուգման ժամանակ: Նոր դասանյութի ավելի արդյունավետ անցկացման համար աշակերտներին նախապես հանձնարարվում է ուսումնասիրել նյութը, որը վերլուծվելու է, բացատրվելու: Զրույցի մեթոդի հիմնական գործառնությունը մոտիվացիան է:

«Բանավեճ» - այս մեթոդը կիրառվում է սովորողների իմացական հետաքրքրությունները ակտիվացնելու, կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունն ի հայտ բերելու համար: Բանավեճի միջոցով արժևորվում, գնահատվում են սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունների չափը, ծավալը, զարգացման աստիճանը: Առանց կայուն և խորը գիտելիքների դժվար է ակտիվորեն մասնակցել բանավեճին, համոզել ընդդիմախոսներին: Բանավեճը սովորողներից պահանջում է ճիշտ ձևակերպել իրենց

մտքերը, համբերատար լսել ընկերների պատասխանները, կարծիքները, հարցապնդումները, հակադրվելու դեպքում բացառել վիրավորանքը: Բանավեճը կարող է լինել ազատ, երբ այն զարգանում է ազատ, և ղեկավարվող, երբ այն զարգանում է որոշակի ուղղությամբ:

2. Զննական մեթոդներ

Զննական են համարվում այն մեթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագներից և ուսուցման տեխնիկական միջոցներից: Զննականությունը հնարավորություն է ընձեռում օբյեկտներին, առարկաներին ծանոթանալ բնական վիճակում և կամ սիմվոլների միջոցով:

«Իյուստրացիա» - այս մեթոդը խնդիր է դնում կամ պահանջում է ուսուցման գործընթացում ուսումնական նյութը հաղորդելիս կիրառել դիտազննական պարագաներ՝ քարտեզներ, պաստառներ, գծագրեր, նկարներ, դիմանկարներ և այլն: Դրանց ցույց տալն ու վերլուծությունը կոչվում է իյուստրացիա: Ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ պատմելը, գրույցը, բացատրությունը, դասախոսությունը զուգակցվում են իյուստրացիային, այսինքն՝ ցուցադրմանը:

«Դեմոնստրացիա» - այս մեթոդի էությունը նույնպես ցուցադրումն է: Օրինակ՝ ցուցադրվում են գործիքներ, սարքեր, տեխնիկական միջոցներ,, ֆիլմեր և այլն: Դեմոնստրացիայի դեպքում ցուցադրմանն ուղեկցում է շարժումը և ահա ի տարբերություն իյուստրացիայի, այն կոչվում է դեմոնստրացիա: Սակայն իմաստը մնում է նույնը՝ ցուցադրումը:

3. Գործնական մեթոդներ

Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ

կատարում են մտավոր և գործնական աշխատանք, որոնք փոխկապակցվում են՝ կանխանշած նպատակին հասնելու համար: Սրանք կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի բոլոր փուլերում: Բոլոր տեսակի 3 վարժությունների բնույթը և մեթոդիկական կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից: Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ.

1. առաջադրանքի պլանավորում,

2. առաջադրանքի կատարում,

3. կատարման ընթացքի խթանում,

4. վերահսկողություն,

5. կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում:

2. Լաբորատոր մեթոդներ

Ավանդաբար այս մեթոդները դասվում են գործնական մեթոդների շարքին և վերաբերում են առանձին դասընթացների, օրինակ՝ «Ֆիզիկա», «Քիմիա»:

«Լաբորատոր» – այս մեթոդը փոխկապակցված գործողություններով լուծում է կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրներ: Գործողությունները կրում են գործնական բնույթ:

3. Բացատրական-ցուցադրական մեթոդ

«Բացատրական-ցուցադրական» մեթոդի էությունն այն է, որ դասավանդողը սովորողներին հաղորդում է պատրաստի գիտելիքներ, իսկ սովորողները այդ գիտելիքները ամրակայում են իրենց հիշողության մեջ՝ հենվելով դիդակտիկ նյութերի վրա: Այս մեթոդի առավելությունը ժամանակի տնտեսման մեջ է:

4. Վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) մեթոդ

Վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) մեթոդը ենթադրում է դասավանդողի կողմից ուսումնական նյութի մշակում, հաղորդում: Սովորողը ինքնուրույն նախապես կատարում է առաջադրանքները, հանձնարարությունները: Ուսումնասիրում է դասագրքի համապատասխան տեքստը, օժանդակ նյութերը և ուղղակի վերարտադրում:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործության մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են՝

- աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի

գործընթացի

- աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը
- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար
- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ
- նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «զուլի են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներ

Ներկայումս մեթոդական բազմաթիվ նորամուծություններ կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ (անգլ. inter՝ փոխադարձ, act՝ գործողություն) նշանակում է փոխանցել կամ գրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի (կամ համակարգչի) հետ: Այսպիսով՝ ինտերակտիվ ուսուցումն առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնական խնդիրների լուծման ընթացքում սովորողի ազատության վրա:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներում արժևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի

մատուցումը, այլ գիտելիքի յուրացումը սեփական փորձի, սխալների ու ձեռքբերումների հիման վրա՝ հնարավորություն տալով զարգացնել կյանքի համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ:

Ինտերակտիվ մեթոդները նպատակ ունեն զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները, այսինքն՝ ոչ թե սոսկ պատրաստի գիտելիքների ստացումը, այլ դրանց ձեռքբերումը բանավեճի, երկխոսության, հաղորդակցման, շփումների, հուզական ընկալման միջոցով:

Ինտերակտիվն ուսումնական գործունեության կազմակերպման յուրահատուկ ձև է, որն ունի կոնկրետ նպատակներ: Այդ նպատակներից մեկն ուսուցման համապատասխան միջավայրի ձևավորումն է, որում երեխան զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը, իմացական ներուժը դրսևորելու հնարավորությունները, ինչն ուսուցման գործընթացը դարձնում է արդյունավետ: Ինտերակտիվ ուսուցման էությունն այն է, որ բոլոր սովորողներն ընդգրկվում են ուսումնառության մեջ, ընդ որում յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է ունենում գիտելիքների ու մտքերի փոխանակման գործընթացում:

Առկա են ինտերակտիվ ուսուցման մեթոդների ընտրության մի շարք գործոններ՝

- ❖ ուսուցման նպատակները, խնդիրներն ու բովանդակությունը
- ❖ ուսումնական նյութի ծավալն ու բարդությունը,
- ❖ սովորողների պատրաստվածության մակարդակը, փորձի առկայությունը,
- ❖ սովորողների շահագրգռվածությունը, դրդապատճառները,
- ❖ սովորողների տարիքը, աշխատունակությունը, ծանրաբեռնվածությունը, դիմացկունությունը, վարժվածությունը, ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները
- ❖ ուսումնական պարապմունքի տեսակը և կառուցվածքը,
- ❖ ուսումնական ժամաքանակը,
- ❖ ինտերակտիվ ուսուցման համար ցանկալի չէ սովորողների մեծաթիվ խումբը. մեծ խմբերը կարելի է բաժանել փոքր ենթախմբերի, որպեսզի յուրաքանչյուր խումբ հնարավորություն ունենա ներկայացնելու իր տեսակետը,

- ❖ աշխատանքն սկսելուց առաջ դասարանը պետք է պատրաստել. ցանկալի է, որ նստելու դիրքը կամ աթոռների դասավորությունը նպաստեն դասալրոցեսի կազմակերպմանը (շրջանաձև կամ եղնու դիրքով). աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը պետք է նախօրոք պատրաստվեն,
- ❖ պետք է ուշադիր լինել ժամանակի հարցում. ժամանակի վերաբերյալ պետք է պայմանավորվել աշխատանքի սկզբում և պահպանել պայմանավորվածությունը,
- ❖ պետք է ուշադիր լինել փոքր խմբերի ձևավորման հարցում. կան խմբերի ձևավորման մի քանի սկզբունքներ՝ կամավորության, պատահական, ըստ նախասիրությունների, ընդունակությունների և այլն:

Ինտերակտիվ ուսուցման առավելություններն են՝

- ❖ թույլ է տալիս սեփական փորձի վրա գիտակցել և քննարկել ուսումնական նյութը, ձևավորում է շփման հմտություններ, օգնում է գիտակցել խմբային փորձի նշանակությունը, զարգացնում է պատասխանատվության և խմբի արդյունքի համար հաշվետու լինելու զգացումը, խթանում է թիմային փոխգործակցությունը, ընձեռում է ինքնադրսևորման հնարավորություն, աշակերտները սովորում են միմյանցից,
- ❖ սովորեցնում է մասնակցել և վերահսկել սեփական մասնակցությունը խմբային աշխատանքում, հարգել խմբի օրենքները, հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, օգնում է համաձայնեցնել գործողությունները, սովորեցնում է գիտելիքներ ձեռք բերել փորձի միջոցով:

ՄԵԹՈԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍՈՒՄ

Սովորաբար դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝

1. դասի սկիզբ,
2. նոր նյութի բացատրություն,
3. սովորածը պարզելու հնարներ:

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետությանը:

Ժամանակակից կրթակարգի մեջ տեղ գտած բազմաթիվ մեթոդների մեջ իր անփոխարինելի տեղն ունի ԽԻԿ համակարգը, որը հստակորեն լուսաբանում է ողջ դասապրոցեսի անցկացման արդյունավետության աստիճանը: Այն իր մեջ ներառում է իրար հետ սերտորեն կապված երեք փուլեր՝ խթանում, իմաստավորում, կշռադատում:

Խթանման փուլի հիմնական առանձնահատկություններից են՝

1. Նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը. Դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր դասը հնի շարունակությունն է: Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները:
2. Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ:
3. Աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում ընթացքին:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝

1. Մտազրոհ
2. Խմբավորում
3. Պրիզմա

4. Մտածիր-գույգ կազմիր-քննարկիր

4. Ձնագնդի

5. Հինգ բույսերից ազատ շարադրանք:

Իմաստի ընկալման փուլի հիմնական նպատակներից են՝

1. Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը
2. Տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը
3. Նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝

1. T-աձև աղյուսակ
2. Գաղափարների քարտեզ
3. Վենի դիագրամ
4. Փոխգործուն նշանների համակարգ.
5. Խորանարդում
6. Խճանկար
7. Երեք բանալի և մեկ կողպեք
8. Շրջագայություն պատկերասրահում
9. Գաղափարների քարտեզագրում
10. Բանավեճ
11. Զրույց

Կշռադատման փուլի նպատակներից են՝


1. Սովորողները կարողանան արտահայտել նոր ստացած տեղեկատվությունը իրենց բառերով և ձևակերպումներով:
2. Նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի կշռադատման փուլում՝

1. Քառաբաժան
2. Խորանարդում:
3. ԳՈՒՍ աղյուսակը, / կարելի է օգտագործել նաև խթանման փուլում
4. Ելքի քարտերի լրացում

5.ՄՏԱԳՐՈՂ

Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը:



Հետազոտության , ինչպես նաև գործնականում պարզել եմ , որ մտազրոհ մեթոդը նպատակահարմար է կիրառել ցանկացած առարկայի դասի խթանման փուլում կոնկրետ խնդիր լուծելու և սովորողների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը զարգացնելու, ինքնավստահություն, համագործակցային հմտություններ ձևավորելու նպատակով: Մեթոդի արդյունքները հեշտ գնահատելի են, իսկ հստակ կանոնների առկայությունը մեթոդը դարձնում է դյուրընկալելի սովորողների համար:

ԽՄԲԱՎՈՐՈՒՄ


Խմբավորումն այն մեթոդական հնարներից է, որն օգնում է երեխաներին ազատ ,անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Խմբավորումը կարող է օգտագործել դասի տարբեր փուլերում : Խմբավորման մեթոդը հնարավորություն է տալիս սովորածը ի մի բերելու, ամփոփելու :Հնարավորություն է ստեղծվում հստակ պատկերացում կազմել որևէ թեմայի իմացության ընկալման, յուրացման մասին: Սովորողը հնարավորություն է ստանում տեղեկանալ իր իսկ ունեցած գիտելիքների և դրանց

միջև կապերի մասին:

Պրիզմա

Այս մեթոդը կիրառվում է դասի սկզբնական, խթանման փուլում: Գործնականում ինձ համար պարզ է դարձել, որ պրիզմա մեթոդը աշակերտներին հնարավորություն է տալիս ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Այն ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն:

Prism



T-աձև աղյուսակ

T-աձև աղյուսակը կիրառվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Այն կազմված է երկու բաժնից, որտեղ լրացվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: T տառը հիշեցնող աղյուսակը նպատակահարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (կողմ/դեմ, այո/ոչ) կամ հակադրություն/համադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

T-shaped table

Better earth

Positive aspects	Negative aspects
save water give away unnecessary things save energy recycle	global nuclear war extreme weather events increased earthquakes sea levels rising


ՎԵՆԻ ԴԻԱԳՐԱՄ

«Վենի դիագրամ» - այս մեթոդը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են ընդհանրությունները:

Իմ մանկավարժական պրակտիկայի ընթացքում ինձ մոտ հաջողվել է Վենի դիագրամ մեթոդի օգնությամբ վերհանել աշակերտների նախնական գիտելիքները դասի խթանման փուլում: Վենի դիագրամը կարելի է կառուցել նաև երեք և ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ և նշվում են ընդհանրությունները: Ես հաճախ կիրառում եմ 3 շրջանաձև պատկերներովը:

Venn diagram

Sorting features of plants and animals



arms , breathe,grow,eyes,roots,ears,leaf,die,
stem,back,alive,eyebrows,seed,drink,petal,move,bark

ՓՈՒԳՈՐԾՈՒՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Այդ մեթոդը զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են:

System of various signs

V	-	+	?	!
I know	Contradicts	It is new information	I don't know	It is interesting to discuss

Իմ կարծիքով փոխներգործուն նշանների համակարգը արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է սովորողին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: Կարդալու ընթացքում արված նշանները ծառայում են որպես տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:

Մտածիր-գույգ կազմիր-հաղորդիր

Այս մեթոդական հնարի քայլերը .

1. Առաջին փուլում ասովորողներն ինքնուրույն մտածում են առաջադրանքի շուրջ:
2. Երկրորդ փուլում գույգերով քննարկում են իրենց տեսակետը:
3. Երրորդ փուլում գույգերն իրենց տեսակետը ներկայացնում են ամբողջ դասարանին:

-

Ձևագնդի

Ձևագնդին սովորողների կարծիքների փոխանակման, ընտրության, դրանց հավաքագրման և խմբի գաղափարների ամբողջացումն է: Արդյունավետ է կիրառել փոքր՝ 2-4 հոգանոց խմբերով:

Ընթացքը .

1. Սովորողներին ներկայացնել որևէ պատմություն կամ առաջադրանք: 2. Անհատական առաջադրանք, ինչ միտք է ծագում առաջին հերթին: Գրել կարծիքների կամ գաղափարների ցանկ՝ այդ պատմության կամ առաջադրանքի վերաբերյալ (4 թույլ):
3. Կազմել գույգեր և միմյանց ներկայացնել անձնական կարծիքները, այնուհետև միասին ձևակերպել երկուսի համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք կընտրվեն անհատական կարծիքների ցանկից: Գրել դրանք թղթի վրա (6 թույլ):
4. Կազմել չորս հոգանոց խմբեր, ներկայացնել գույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպել չորս ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Խումբը գրի դրանք առանձին թղթի վրա (8 թույլ):

5. Երկուական չորս հոգանոց խմբերը միանան և կազմեն ութ հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնեն իրենց կարծիքները, պարզեն նմանություններն ու տարբերությունները: Կրկին ձևակերպել չորս ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար:

6. Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները ներկայացնել դասարանին:

ԽՃԱՆԿԱՐ

«Խճանկար» անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորում են խմբային աշխատանքների արդյունքները:

Այս մեթոդը կարելի է կիրառել տարբեր ձևերով՝

Առաջադրանքի միջոցով աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ կարդալ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմվածքներ կամ նույն հեղինակից այլ պատմվածքներ:

- ✓ Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել լտեքստի բառապաշարը, հիմնական գաղափարը, քերականությունը, ոճը և այլն:
- ✓ Սովորողները կարող են խճանկարը կիրառել առանց հետազոտությունների նախագծեր իրագործելիս:

Շրջագայություն պատկերասրահում

«Շրջագայություն պատկերասրահում» - այս մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է: Նպատակն է՝ փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Քառաբաժան

Այս մեթոդը , իմ կարծիքով բավականին հետաքրքիր է, հարմար է տեքստի հետ աշխատելիս: Այն կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով: Անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար մուտքագրել չորս բաժիններից յուրաքանչյուրում Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված ,դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին, հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոխել:Քառաբաժան մեթոդի աղյուսակը ցույց է տրվում էլեկտրոնային գրատախտակի վրա: Երեխաները օգտվելով word – ի աղյուսակ գծելու գործիքից , գծում են աղյուսակ այնպես, որ հորիզոնական և ուղղահայաց վանդակները լինեն չորսական, նայելով օրինակին :

Quarter division chart

What I see ?	What I hear ?
What I feel ?	What did I learn ?

Խորանարդում

Խորանարդումը կշռադատման փուլում կիրառվող մեթոդներից է, որ աշակերտին մղում է պատասխանելու թեմային առնչվող վեց տարբեր հարցերի, որոնք սկսում են պարզից և աստիճանաբար բարդանում: Ուսուցիչն աշակերտներին բաժանում է փոքր խմբերի, տափս է թեմայի հետ կապված որևէ առարկա կամ հասկացություն (ցանկալի է, որ յուրաքանչյուր խմբի տրվի տարբեր առարկա կամ հասկացություն) և խորանարդ, որի 6 նիստերից յուրաքանչյուրի վրա գրված են հետևյալ առաջադրանքները:

Նկարագրիր այն (ինչ տեսնում ես՝ գույները, ձևերը, չափսերը): Համեմատիր այն (ինչի՞ է նման, ինչի՞ց է տարբեր):

Ինչի՞ մասին է այն ստիպում քեզ մտածել: (Մտքումդ ի՞նչ է ծագում, դրանք կարող են նման և տարբեր բաներ փնել):

Ինչի՞ց է այն բաղկացած (կամ պատրաստված):

Ինչպե՞ս կարող ես օգտագործել այն:

Այն լավն է, թե՞ վատը:

Խմբերին առաջարկվում է ուշադիր դիտել առարկան կամ մտածել տրված հասկացության մասին և իրար հետ համագործակցելով՝ գրավոր պատասխանել խորանարդի նիստերի վրա գրված 6 առաջադրանքներին (լավ կլինի նիստերը համարակալել, որ պատասխանելիս աշակերտները հեշտից գնան դեպի բարդը): Խմբերն ազատ շարադրում են իրենց մտքերը: Գրավոր հատվածն ավարտելուց հետո իրար են ներկայացնում իրենց կատարածը: Անհրաժեշտության դեպքում մյուսխմբերի անդամները կարող են շտկումներ, լրացումներ կատարել կամ հարցեր տար գնահատել կատարածը՝ պարզաբանելով, թե ինչը դուր եկավ և ինչու: Խորանարդման մեթոդը կիրառելի է ծանոթ թեմայի դեպքում, թիրախ առարկան կամ հասկացությունը զգուշորեն պետք է ընտրել:

ԳՈՒՍ (Գիտեն-Ուզում եմ Սովորել-Սովորել եմ), աղյուսակը ստեղծվել է Դոննա Օգլի (անգլ.՝ Donna Ogle) կողմից 1986 թվականին^[2]: ԳՈՒՍ աղյուսակը կարող է օգտագործվել ցանկացած առարկայի ուսուցման ժամանակ ամբողջական կամ փոքր խմբերով: Կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

- ✓ Աշակերտներին հարցնում ենք թե ի՞նչ գիտեն դասի թեմայի մասին և լրացնում աղյուսակի առաջին՝ **«Գ-ի՞նչ գիտենք արդեն»** սյունակում:
- ✓ Աշակերտներին հարցնում ենք, թե թեմայի հետ կապված ի՞նչ հարցեր ունեն և լրացնում ենք դրանք աղյուսակի երկրորդ՝ **«Ու-ի՞նչ ենք ուզում իմանալ»** սյունակում:
- ✓ Աշակերտներին առաջարկենք կարդալ պատմությունը կամ ընտրված հատվածը և գտնել այն տեղեկությունները, որոնք պատասխանում են իրենց նախնական հարցերին կամ լրացնում են դրանք՝ ընդլայնելով թեմայի մասին պատկերացումները:
- ✓ Երբ աշակերտները վերջացնեն կարդալը, նրանց ուշադրությունը պետք է հրավիրենք երրորդ սյունակի վրա՝ **«Մ-ի՞նչ ենք սովորել»**: Առաջարկենք թվարկել թեմային վերաբերող նոր տեղեկություններ, որոնք նրանք հայտնաբերել են կարդալու ընթացքում, և գրի՝ առնենք դրանք երրորդ սյունակում:

KWL

Know	Want to know	Learned
------	--------------	---------

ՀՆԳՑԱԿԻ ՄԵԹՈԴ

Հնգյակի մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս առկա գիտելիքները հանրագումարի բերել, մի քանի բառով ներկայացնել մտքերը, պատկերացումները: Այս մեթոդով աշխատելիս դասարանը պետք է բաժանել զույգերի և յուրաքանչյուր զույգ տրված թեմայով պետք է գրի հնգյակը: Հնգյակ գրելու քայլերն են՝

1. Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը (զոյական)
2. Երկրորդ տողը հասկացությունը բնութագրող երկու բառ է (ածականներ)
3. Երրորդ տողը բաղկացած է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության

հետ կապված գործողություններ (դերբայներ)

4. Չորրորդ տողը ներկայացնում է չորս բառից կազմված մի արտահայտություն, որով հասկացության նկատմամբ դրսևորվում է զգացմունքը կամ վերաբերմունքը

5. Վերջին՝ հինգերորդ տողը մեկ հոմանիշ բառ է, որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Method of five

Environment
Clean,beautiful
Like,save,respect
Environmental protection is
important.
Earth

Ելքի քարտերի լրացում

Ելքի քարտերը լրացվում են **3-2-1 մեթոդով** , որը կատարվում է անդրադարձի ընթացքում:

Սովորողները պետք է .

- Գրեն երեք բան, որ սովորեցին այդ դասի ընթացքում,
- Երկու բան, որ շատ կարևոր և արդյունավետ են համարում,
- Մեկ բան, որ վաղն անմիջապես կկիրառեն,
- Առաջարկություններ:

Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա:Դրանք են՝

- ուսուցման նպատակները և խնդիրները,բովանդակությունը
- ուսումնական նյութի քանակը և բարդությունը
- սովորողների պատրաստվածության մակարդակը
- ուսումնական ժամաքանակը
- սովորողների տարիքային և անհատականառանձնահատկությունները
- ուսուցման կազմակերպման պայմանները
- ուսուցիչ —աշակերտ հարաբերությունները
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը

ՏՀՏ -Ն ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՏՀՏ-ները մուտք են գործում մարդու կենսագործունեության բոլոր, այդ թվում նաև՝ դպրոցական ոլորտ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն օտար լեզուների դասերին նպաստում է ուսուցման արդյունավետությանը, մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունները, ճանաչողությունը, այլընտրանքային և փոխկապակցված մեթոդների կիրառման հնարավորությունները: Այս իրավիճակում ուսուցիչը դադարում է գիտելիքների հաղորդման միակ աղբյուրը լինելուց, քանի որ սովորողն ինքը պետք է կողմնորոշվի համացանցում և իր պահանջմունքներին համապատասխան աղբյուրներ գտնի: Կրթական համակարգում լայն կիրառություն են ստացել սոցիալական ցանցերը, որոնք հնարավորություն են տալիս ստեղծելու ուսումնական հաստատության կրթական կայքը, անցկացնելու հեռավար պարապմունքներ, հանդիպումներ, գիտաժողովներ, խորհրդատվություններ՝ հետադարձ կապի ապահովմամբ: Կարևոր է նոր ուղղության՝ մեդիակրթության (media education) ի հայտ գալը, որն օգնում է սովորողներին՝ ուսումնասիրելու զանգվածային հաղորդակցության (մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի, կինոյի, համացանցի և այլն) օրինաչափությունները, ազդեցության մեխանիզմները և դրանց վատ ազդեցությունից պաշտպանվելու միջոցները:

Լեզվի ուսուցման ժամանակ լավագույն օգնություն են հանդիսանում տեքստեր թարգմանող ծրագրերը, հավելվածները, տեքստային խմբագրիչները, որոնք սխալների ուղղումներ կատարելու օգնող ֆունկցիա ունեն, էլոկտրոնային գրադարանները, լինգվաֆոնային լսարանները և այլն: Առանձնակի տեղ ունեն ուսումնական հարթակները, որտեղ միմյանց հետ լավագույնս համագործակցում են տարբեր երկրների դպրոցների աշակերտներ՝ լավացնելով լեզվական իրենց գիտելիքները:

Օտար լեզուների ուսուցման և ուսումնառության գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից թվային տեխնոլոգիաների ուսուցողական ներուժն ու գործառույթները:

Այսօր ՏՀՏ -ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում առաջին հերթին դասին: Ինֆորմատիկացիան կարևոր դերակատարություն ունի կրթության

ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/

մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը

- ❖ նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը
- ❖ բարելավել դասի անցկացման մեթոդները
- ❖ ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները
- ❖ պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
- ❖ օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
- ❖ արագ և որակյալ պատրաստվել դասին:

ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք օգնում են ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի.

- ✓ դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/
- ✓ ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում
- ✓ պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում
- ✓ դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում
- ✓ կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համարմոնիթորինգի ստեղծում
- ✓ տեքստային աշխատանքների ստեղծում
- ✓ մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով:

ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա- հուզական ֆոնի վրա, բարձրացնում են սովորողների առաջադիմությունը և հետաքրքրասիրությունը, նպաստում են մանկավարժի աշխատանքի որակի բարձրացմանը:

Կան մի շարք կրթական առցանց հարթակներ, գործիքներ, միջոցներ, որոնք խթանում են աշակերտների՝ ուսման նկատմամբ հետաքրքրությունը, նպաստում են սովորել սովորելու կարողության զարգացմանը: Ժամանակակից առցանց

հարթակները, ուշադրությունը կենտրոնացնելու, ուսման հանդեպ հետաքրքրություն առաջացնելու և լիարժեք ներգրավվածություն ապահովելու մեծ հնարավորություն են ընձեռում:

Ուսումնական գործընթացն առավել հետաքրքիր, արդյունավետ դարձնելու համար մեզ այսօր կարող են օգնել մի շարք առցանց գործիքներ և հարթակներ (Kahoot, Playposit, Padlet, Quizizz, LearningApps, Google forms, Socrative և այլն): Անդրադառնանք դրանցից մի քանիսին: Kahoot, Quizizz, Socrative, Google forms, Teams առցանց գործիքները համաժամանակյա, առցանց եղանակով գիտելիքների ստուգման գործիքներ են: Այս ծրագրերի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց, միավորային գնահատում: Ի տարբերություն Quizizz-ի և Socrative-ի, որոնք օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման համար նախատեսված «սենյակի» տվյալները, և յուրաքանչյուր սովորող պետք է անհատապես կիրառի համակարգիչ, հեռախոս կամ պլանշետ, Kahoot-ը օգտագործելիս սովորողները պետք է լինեն միասին նույն սենյակում և հետևեն մեկ ընդհանուր համակարգչին միացված պրոեկտորին ու պրոեկցիոն էկրանին: Սովորողները հետևում են հարցադրումներին և նշում են պատասխանները: Այս գործիքները հեշտացնում են նաև ուսումնական հաստատության կառավարման գործընթացը՝ թույլ տալով վերլուծություններ կատարել դպրոցի ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսման որակի բարձրացման ողորությամբ:

Kahoot - ի միջոցով հնարավոր է.

- հարցերի մեջ տեղադրել նկարներ, բանաձևեր, գծագրեր, աղյուսակներ
- հարցերն ընտրել ըստ բարդության աստիճանի
- հարցերին ավելացնել նկարազրություն, նկար, տեսահոլովակ
- օգտագործել հավելվածը նաև Skype-ի և Google Hangouts-ի միջոցով

Quizizz-ի միջոցով հնարավոր է տվյալ տիրույթում աշխատելիս գնահատել սովորողների՝ առաջադրանքների կատարման և՛ արագությունը, և՛ ճշգրտությունը:

Socrative-ի միջոցով հնարավոր է առաջադրանքները ստեղծելիս կազմել հարցադրումների բազմակի ընտրանք, ստեղծել հարցեր՝ ճիշտ-սխալ ձևաչափով և «լրացնել բաց թողնվածը» ձևաչափերով, հարցերի հաջորդականությունը դասավանդողի ընտրությամբ խառնվում է համակարգի միջոցով:

Google Forms -ի միջոցով՝

- **Instant Feedback** ռեժիմով սովորողը կարող է ընտրել հարցերում պատասխաններ, որոնք դասավորված են հերթականությամբ՝ չունենալով հնարավորություն փոփոխելու պատասխանը, և նույնիսկ բաց թողնել հարցը հետագա լուծման համար,
- **Open Navigation** ռեժիմով սովորողը կարողանում է պատասխանել ցանկացած հերթականությամբ և փոփոխել պատասխանը, այնուամենայնիվ, մինչև թեստի ավարտը դասավանդողը տեսնում է, թե ինչ պատասխան է գրանցել սովորողը,
- **Teacher Paced** ռեժիմով դասավանդողը ինքն է ընտրում, թե որ հարցը լինի հաջորդը, և իրավունք ունի բաց թողնելու կամ կրկնելու հարցը:

Quizzez, Socrative և **Google Forms** գործիքների միջոցով հնարավոր է հարցման ավարտին MS Excel ձևաչափով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները: Վերը նշված գործիքները հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու վիճակագրական տվյալներ՝ ըստ դասարանների, աշակերտների, տվյալ թեմայի և առանձին առաջադրանքի յուրացման աստիճանի: Այս առցանց հարթակները մեծապես նպաստում են նաև հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման որակը վերահսկելուն:

LearningApps Ուսուցիչների համար ուսուցանող գնահատման մեծ հնարավորություն է ընձեռում LearningApps առցանց անվճար հավելվածը: Առկա առաջադրանքների հսկայական ընտրանին հնարավորություն է տալիս ստեղծելու՝

- ✓ տարաբնույթ ուսումնական խաղեր
- ✓ տարբեր թեմաներով առցանց փոխներգործուն թեստեր, առաջադրանքներ, թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքներ
- ✓ վերբեռնել տարբեր ձևաչափերով ֆայլեր
- ✓ տարածել ստեղծված առցանց վարժությունները հղման և QR կոդի միջոցով
- ✓ հնարավոր է տարածել հայտարարություններ և կազմակերպել քննարկում գրուցարանի (chat) օգնությամբ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ S2S-ի օգտագործման շնորհիվ ուսուցիչը խնայում է դասի ժամանակի մինչև 30% -ը, քան գրատախտակում աշխատելիս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները խթանում են աշակերտների ուսուցման գործընթացը: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանք ընտրելիս պետք է հաշվի առնել ոչ միայն առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները: Միևնույն ժամանակ

առանց ուսուցիչ-աշակերտ փոխկապակցված համագործակցության չի կարող արդյունավետ լինել գիտելիքների յուրացումը: Գիտելիքների յուրացումը պետք է դարձնել հաճելի գործընթաց աշակերտների համար: Այն ուսուցիչը, որը լիարժեքորեն տիրապետում է ուսուցման մեթոդներին, հնարներին, անպայման հաջողության կհասնի, ճիշտ և ժամանակին կիրառելով յուրաքանչյուր մեթոդ, հնար, վարժություն: Շատ մեթոդներ կան, որոնց կիրառումը միանշանակ չէ: Շատ ուսուցիչներ կարողանում են հետաքրքիր ու հաջողված իմպրովիզների արդյունքում կոտրել կարծրատիպեր և տվյալ մեթոդը կիրառել դասի տարբեր փուլերում: Չէ որ մեթոդի կիրառությունը առավել շատ կախված է ուսումնական նպատակից, այսինքն ինչ ենք ուզում, որ երեխան իմանա և կարողանա: Եվ եթե կիրառված մեթոդը տալիս է ցանկալի արդյունք, ուրեմն ճիշտ ուղու վրա ենք: Հետևաբար բոլոր փուլերի համար էլ գոյություն ունեցող մեթոդները բազմաթիվ ու բազմազան են, որոնցից մի քանիսն ես նկարագրեցի և առաջարկեցի կիրառել դասի որոշակի փուլերի համար: Ընտրությունը կախված է դասավանդվող առարկայից, դասի նպատակից, տրամադրված ժամանակից: Այս մեթոդներից շատերը կարող են կիրառվել մեկ դասաժամի ընթացքում, սակայն որոշները կարելի է երկարացնել՝ հանձնարարելով տնային աշխատանք: Դասի պլանը գրելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ժամաբաշխման վրա, որի ճիշտ բաշխումը և նրան հետևելը ամբողջ պլանավորած գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիքն է: Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործ և լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների իրականացում: Դասից հետո անհրաժեշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել, թե ուսուցիչը հասավ արդյո՞ք դասի նպատակին, արդյո՞ք իրականացան դասի նպատակներին հասնելու սկնկալիքները և ի՞նչ չափով,

Ճիշտ էին արդյոք ընտրված մեթոդները, ժամանակի բաշխումը որքանով էր իրատեսական, ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպես:

Այսպիսով ես հանգեցի այն եզրակացությանը, որ գիտելիքների յուրացումը պետք է դարձնել հաճելի գործընթաց աշակերտների համար: Այն ուսուցիչը, որը լիարժեքորեն տիրապետում է ուսուցման մեթոդներին, հնարներին, անպայման հաջողության կհասնի, ճիշտ և ժամանակին կիրառելով յուրաքանչյուր մեթոդ, հնար, վարժություն: Իսկ օտար լեզուների ուսուցման և ուսումնառության գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից թվային տեխնոլոգիաների ուսուցողական ներուժն ու գործառույթները: ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց 6.պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա, բարձրացնում են սովորողների առաջադիմությունը և հետաքրքրասիրությունը, նպաստում են մանկավարժի աշխատանքի որակի բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ուսուցման արդյունավետ մեթոդներ ու հնարներ» հեղինակ՝ Սերոբ Խաչատրյան
2. «Մանկավարժական հանդես» Մխիթար Սեբաստացի կրթահամալիր
3. Աջամոլյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացումը հանրակրթական դպրոցում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ:
4. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա. Շարխաթունյան Հ., Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, «Աստղիկ» հրատարակչություն, Երևան, 2004
5. Մ. Աստվածատրյան «Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» Մեթոդական ցուցումներ» ձեռնարկ:
6. <https://opac.flib.sci.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=15013>

